

Սուրբ Ծննդյան քարոզ 2025

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ: Ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Միրելի քույրեր եւ եղբայրներ,

Կրկին Սուրբ Ծնունդ է: Աշխարհասփյուռ հայոց եկեղեցիներում կրկին հնչում է գվարթաձայն ավետիսը՝ *«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»*: Այս եւ հետագա 8 օրերին մենք այս բարի լուրն ենք փոխանցելու մեկս մյուսին:

Հայերս Սուրբ Ծննդյան առիթով ասում ենք *«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»*, որովհետեւ այսօր Հայ Եկեղեցին նշում է ոչ միայն մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի երկրավոր Ծնունդը, այլ նաեւ Մկրտությունը՝ Աստվածայայտնությունը: Քիչ հետո ի նշան Տիրոջ Սուրբ Մկրտության նաեւ Ջրօրհնէք պիտի կատարենք եւ Սբ. Իսաչով ու Սրբալույս Մյուռնով օրհնենք ջուրը, որը վերջում կրաժանվի Ձեզ: Օրհնված ջուրը մեզ պետք է հիշեցնի ոչ միայն Հիսուս Քրիստոսի Սուրբ Մկրտությունը, այլ նաեւ հիշեցնի մեր մկրտության եւ Հիսուս Քրիստոսով մեր փրկության մասին:

Հայ Եկեղեցին համատեղ է նշում Քրիստոսի ծնունդը եւ մկրտությունը, որովհետեւ Հիսուսի երկրային կյանքի այս երկու կարեւոր իրադարձությունները միասին են ամբողջացնում Նրա հայտնության խորհուրդը: Տիրոջ Սուրբ Մկրտությամբ է աշխարհին հայտարարվում Հիսուս Քրիստոսի աստվածությունը, երբ հնչում է՝ *«Դա է Իմ սիրելի Որդին, որին Ես հավանեցի»*, - աստուածային ձայնը երկնքից (Մտթ. Գ 17):

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»: Այս ավանդական ողջույնը, որ փոխանակում են Հայ Եկեղեցու հավատացյալները Ծննդյան տոնի առթիվ, իր մեջ ամփոփում է քրիստոսաբանության ամբողջ իմաստը, այն մեր հավատի հիմքն է: Հիսուս ծնվեց որպէս մանուկ Բեթլեհեմում, բայց Նա հայտնվեց որպէս Աստված՝ կենդանի, անժամանցելի, որպէս փրկության լույս եւ հույս մարդկության համար:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ». Նա ծնվեց մի խեղճ մսուրում, բայց Իր մեջ կրում էր աշխարհի Արարչի ողջ գորությունը: Նրա ծնունդը ցույց տվեց, որ իրական մեծությունը խոնարհության մեջ է, ճշմարիտ ուժը ոչ թե բռնության, այլ սիրո մեջ:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ», եւ այդ հայտնությունը բոլորի համար է՝ հարուստի ու աղքատի, ուժեղի ու տկարի, մաքուրի ու մեղավորի: Եւ այդ հայտնությամբ մենք կարող ենք վստահ լինել, որ մեր մեղքերի համար կա

ներում, մեր տառապանքների համար՝ մխիթարություն, եւ մեր մահվան համար՝ հաղթանակ:

«*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ*», եւ Հիսուս Քրիստոսով «*Աստուած ընդ մեզ է*»: Աստված մեզ հետ է՝ մեր ցավերի, ուրախությունների, հաղթանակների ու կորուստների մեջ: Նրա հայտնությունն այսօր էլ ի գօրու է փոխել մեր կյանքը, եթե մենք ընդունենք Նրան մեր անկեղծ հավատքով:

«*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ*», բայց այս «*սքանչելի ու մեծ խորհրդի*» արգասիքը կախված է նրանից, թե մենք ինչպես ենք արձագանքում այդ հրավերին: Արդյո՞ք մենք պատրաստ ենք դուրս գալ մեղքի գերության խաւարից եւ քայլել դեպի Նրա մաքրամաքուր լույսը:

«*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ*», որպէսզի խաղաղություն բերի աշխարհին: Բայց այդ խաղաղությունը չի կարող սկսվել, եթե մենք չենք խաղաղվում ինքներս մեզ հետ, մեր հարազատների եւ շրջապատի մարդկանց հետ: Նրա լույսը միայն այն ժամանակ կփայլի մեր շուրջը, երբ մենք դառնանք այդ խաղաղության կրողներ:

«*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ*»՝ որպէս Աստծո անհուն սիրո կենդանի վկայություն: Երբ մենք տօնախմբում ենք Նրա ծնունդը, չենք կարող մոռանալ, որ այդ սերը մեզանից նույնպես պահանջում է պատասխան: Մենք չենք կարող պարզապես դիտող լինել: Մենք կանչված ենք մեր կյանքով վկայելու, որ «*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ*»:

«*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ*»՝ ոչ միայն անհիշելի անցյալում, այլ Նա ծնվում եւ հայտնվում է ամեն անգամ, երբ մեր կյանքում մենք ապավինում ենք Նրան: Երբ մենք կիսում ենք Նրա խաղաղության ու սիրո պատգամը: Հիսուս Քրիստոսի ծնունդը ոչ միայն պատմական իրադարձություն է, այլ նաեւ՝ «*մեծ եւ սքանչելի խորհուրդ*», որ նաեւ այսօր է իրականանում, որովհետեւ Աստծո Որդին նաեւ «*մեզ համար մարմնացաւ*»:

Ուստի, եղբայրներ եւ քույրեր, հիշենք. «*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ*»՝ այս աշխարհը փոխելու համար: Բայց Նա նաեւ մեզ կանչեց փոխվելու, որպէսզի մենք լինենք «*լույսի որդիներ*»: Ամեն անգամ, երբ մենք սիրում ենք, ներում ենք, կարեկցում ենք, բարին ենք գործում, մենք վկայում ենք, որ «*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ*» մեր կյանքի մեջ:

Եկեք դիմավորենք մանկացյալ Աստվածորդուն ոչ միայն մեր խոսքով, այլեւ անկեղծ հավատքով եւ բարի գործերով: Եկեք մեր աղոթքներով, սրբությամբ եւ խոնարհությամբ վկայենք, որ «*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ*», եւ Նրա լույսը կենդանի է մեր մեջ:

Ուրեմն՝ այս օրինյալ ու շնորհընկալ օրը վերանորոգենք մեր հավատքը, եւ առ Աստված նորոգյալ հավատքով ու հույսով եւ առ մարդիկ նորոգյալ սիրով տոնախմբենք այս «*մեծ ու սքանչելի խորհուրդը*», օրհնենք ու փառաբանենք զԱստված մարդկության հանդէպ ցուցաբերած իր սիրո համար եւ օրհնվենք մանկացյալ ու մարդացյալ Փրկչի օրհնութեամբ՝ այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. Ամեն:

*

Սուրբ Ծնունդը կրկին նշում ենք աշխարհաքաղաքական բարդ զարգացումների ժամանակահատվածում, որոնք, բնականաբար, մտահոգիչ են բոլորիս համար: Աշխարհում եւ մանավանդ այն տարածաշրջանում, որտեղ գտնվում է Հայաստան մեր երկիրը, առկա են բազմաթիվ մարտահրավերներ: Աշխարհաքաղաքական դժվարությունները, ներքին և արտաքին ճնշումները, ինչպես նաեւ անվտանգային խնդիրները հայ ժողովրդի առջեւ դնում են մեծ պատասխանատվություն՝ պահպանելու մեր ազգային ինքնությունն ու մշակույթը եւ ամրապնդելու մեր ազգային միասնությունը: Սուրբ Ծնունդը հիշեցնում է, որ միասնության, համբերության ու հույսի միջոցով, միմյանց հանդէպ սեր ու հարգանք ցուցաբերելով հնարավոր է հաղթահարել ցանկացած դժվարություն:

Զայնակցելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին եւ ողջ հոգեւորականաց դասին աղոթում եմ մեր սիրելի հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության բարգավաճման եւ մեր սահմանների խաղաղության համար: Աղոթում եմ Հայաստանյայց Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի անսասանության համար, մեր Թեմի եւ իր հովանու ներքո գործող համայնքների առաքելության հաջողության համար:

Սուրբ Ծննդյան այս տոնական օրերին մանկացյալ Փրկչի օրհնության հայցմամբ շնորհավորում եմ Գերմանահայ մեր համայնքի բոլոր հաստատությունների, թեմական ու համայնքային մարմինների, հոգեւորականաց դասի, հավատավոր մեր ողջ ժողովրդի 2025 Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը:

Շնորհավոր Նոր Տարի: Շնորհավոր Սուրբ Ծնունդ:
«*Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ: Չեզ եւ մեզ մեծ աւետիս*»: Ամէն:

Weihnachtspredigt 2025

Christus ist geboren und erschienen! Euch und uns eine große Frohe Botschaft!

Liebe Schwestern und Brüder,

es ist wieder Weihnachten. Erneut erklingt in den armenischen Kirchen weltweit die frohe Weihnachtsbotschaft: „*Christus ist geboren und erschienen!*“ Heute und in den folgenden acht Tagen werden wir diese frohe Botschaft miteinander teilen.

Wir Armenier sagen zu Weihnachten „*Christus ist geboren und erschienen*“, weil die Armenische Kirche an Weihnachten nicht nur die wunderbare Geburt Jesu Christi feiert, sondern auch Seine Taufe bzw. Gottesoffenbarung. Später werden wir im Zeichen der Heiligen Taufe des Herrn die Wasserweihe vollziehen, indem wir das Wasser mit dem Heiligen Kreuz und dem Heiligen Myron segnen, das anschließend an die Gemeinde ausgeteilt wird. Das geweihte Wasser soll uns nicht nur an die Taufe Jesu Christi erinnern, sondern auch an unsere eigene Taufe und an unsere Erlösung durch Jesus Christus.

Die Armenische Kirche feiert Geburt und Taufe Christi gemeinsam, da diese beiden bedeutenden Ereignisse aus dem irdischen Leben Jesu gemeinsam das Mysterium der Offenbarung des Herrn vervollständigen. Bei der Heiligen Taufe des Herrn verkündet die himmlische Stimme der Menschheit: „*Dieser ist mein geliebter Sohn, an dem ich Wohlgefallen gefunden habe*“ (Mt 3, 17).

„*Christus ist geboren und erschienen.*“ Dieser traditionelle Gruß, den die Gläubigen der Armenischen Kirche an Weihnachten austauschen, umfasst den gesamten Sinn der Christologie und ist die Grundlage unseres Glaubens. Jesus wurde als Kind in Bethlehem geboren, doch Er erschien als lebendiger, unsterblicher Gott und als Licht der Erlösung für die Menschheit.

„*Christus ist geboren und erschienen*“ - als Verkörperung der Wahrheit. Er wurde in einer einfachen Krippe geboren, trug jedoch die ganze Macht des Schöpfers der Welt in sich. Seine Geburt zeigte, dass wahre Größe in Demut liegt und wahre Kraft nicht in Gewalt, sondern in Liebe.

„*Christus ist geboren und erschienen*“, und diese Offenbarung gilt allen - den Reichen und Armen, den Starken und Schwachen, den Reinen und Sündern. Durch diese Offenbarung dürfen wir gewiss sein, dass es Vergebung für unsere Sünden, Trost in unserem Leid und Sieg über den Tod gibt.

„*Christus ist geboren und erschienen*“, und durch Jesus Christus ist „*Gott mit uns*“. Gott ist mit uns in unseren Schmerzen, Freuden, Siegen und Verlusten. Seine

Offenbarung hat auch heute die Kraft, unser Leben zu verändern, wenn wir Ihn mit unserem aufrichtigen Glauben annehmen.

„*Christus ist geboren und erschienen*“, aber das Ergebnis dieses „*wunderbaren und großen Mysteriums*“ hängt davon ab, wie wir auf diese Einladung reagieren. Sind wir bereit, aus der Dunkelheit der Sündenhaftigkeit herauszutreten und in Sein reines Licht zu gehen?

„*Christus ist geboren und erschienen*“, um Frieden in die Welt zu bringen. Doch dieser Frieden kann nicht beginnen, wenn wir nicht mit uns selbst, unseren Angehörigen und den Menschen um uns herum Frieden schließen. Sein Licht wird nur dann um uns herum leuchten, wenn wir Träger dieses Friedens werden.

„*Christus ist geboren und erschienen*“ - als lebendiges Zeugnis der unermesslichen Liebe Gottes. Wenn wir Seine Geburt feiern, dürfen wir nicht vergessen, dass diese Liebe auch eine Antwort von uns verlangt. Wir können nicht bloß Zuschauer bleiben. Wir sind aufgerufen, mit unserem Leben Zeugnis dafür abzulegen, dass „*Christus geboren und erschienen ist*“.

„*Christus ist geboren und erschienen*“ - nicht nur in einer längst vergangenen Zeit, sondern Er wird jedes Mal geboren und erschienen, wenn wir uns in unserem Leben auf Ihn verlassen und Seine Botschaft von Frieden und Liebe teilen. Die Geburt Jesu Christi ist nicht nur ein historisches Ereignis, sondern auch ein „*großes und wunderbares Mysterium*“, das auch heute Wirklichkeit wird, denn der Sohn Gottes ist auch „*für uns Mensch geworden*“.

Daher, Brüder und Schwestern, lasst uns erinnern: „*Christus ist geboren und erschienen*“, um diese Welt zu verändern. Doch Er hat uns auch aufgerufen, uns selbst zu verändern, damit wir „*Kinder des Lichtes*“ werden. Jedes Mal, wenn wir lieben, vergeben, mitfühlen und Gutes tun, bezeugen wir, dass „*Christus geboren und erschienen ist*“ auch in unserem Leben.

Lasst uns den Sohn Gottes nicht nur mit unseren Worten, sondern auch mit aufrichtigem Glauben und guten Werken, willkommen heißen. Lasst uns durch Gebete, Reinheit und Demut bezeugen, dass „*Christus geboren und erschienen ist*“ und Sein Licht in uns lebendig ist.

An diesem gesegneten und gnadenreichen Tag erneuern wir unseren Glauben und feiern mit erneuerter Hoffnung zu Gott, mit erneuerter Liebe zu den Menschen dieses „*große und wunderbare Mysterium*“, preisen Gott für Seine Liebe zur Menschheit und empfangen den Segen des menschengewordenen Erlösers - jetzt und immerdar und in alle Ewigkeit. Amen.

*

Liebe Schwestern und Brüder,

wir feiern Weihnachten erneut in einer Zeit geopolitischer Herausforderungen, die uns alle beunruhigen. In der Welt und insbesondere in der Region, in der sich Armenien befindet, stehen wir vor vielen Schwierigkeiten und Gefahren. Diese geopolitischen Probleme, internen und externen Spannungen sowie sicherheitspolitischen Fragen stellen auch das armenische Volk vor die große Verantwortung, unsere nationale Identität und Kultur zu bewahren und unseren Zusammenhalt zu stärken. Weihnachten erinnert uns daran, dass es durch Einheit, Geduld und Hoffnung sowie durch Liebe und Respekt füreinander möglich ist, alle Hindernisse zu überwinden.

Ich schließe mich den Gebeten unseres Katholikos, Seiner Heiligkeit Karekin II., und den Gebeten unseres gesamten Klerus an und bitte Gott um Wohlstand für unser geliebtes Heimatland Armenien und um Frieden an dessen Grenzen. Ich bete für die Unerschütterlichkeit unserer heiligen Armenisch-Apostolischen Kirche und ihres Muttersitzes St. Etschmiadzin. Ich bete für das Gelingen der Ziele und Mission unserer Diözese und unserer Diözesangemeinden (und insbesondere unserer Gemeinde hier in ...).

Mit der Bitte um den Segen unseres menschengewordenen Heilands gratuliere ich allen Diözesan- und Gemeindegremien, den Geistlichen und allen Organisationen und Mitgliedern unserer armenischen Gemeinschaft in Deutschland zum neuen Jahr 2025 und zum Weihnachtsfest!

Frohes Neues Jahr! Frohe Weihnachten!
Christus ist geboren und erschienen!
Euch und uns eine große Frohe Botschaft! Amen.